ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք էընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարվածհայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանը գտնում է, որ հայցը մերժման ենթակա լինելու պայմաններում դատականծախսերի հատուցման հարցը պետք է համարել լուծված:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ,192-րդ, 362-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Լեգալթրանս» սահմանափակպատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետությանների գործերի նախարարության, վեճի առարկային նկատմամբ ինքնուրույն պահանջչներկայացնող երրորդ անձ «Արթ Քոնսալթինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2026/Ա-16 ծածկագրով մրցույթիգնահատող հանձնաժողովի 13.01.2026 թվականի թիվ 3 արձանագրությամբ «Արթ Քոնսալթինգ»ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝հանձնաժողովին ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2026/Ա-16 ծածկագրով մրցույթով հայտերի գնահատման նիստհրավիրելուն պարտավորեցնելու, դրա անհնարինության դեպքում մրցույթը չեղյալհայտարարելու, որպես հետևանք՝ «Արթ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի և ՀՀ ՆԳՆ միջև ՀՀ ՆԳՆԳՀԾՁԲ-2026/Ա-16 ծածկագրով մրցույթի արդյունքում կնքված պայմանագիրն անվավերճանաչելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի, այդթվում՝ պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Վճիռնօրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և հրապարակման պահից մեկամսյաժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ **Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE63-8835-496B-997E հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am